ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/109

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 19.05.2020թ. թիվ 26/26-1/7363-2020 գրությամբ Ա/Ձ Անուշ Պետրոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության՝ 15.05.2020թ. թիվ 3/4/18450-20 գրության հիման վրա, 19.05.2020թ. թիվ 26/26-1/7363-2020 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Անուշ Պետրոսյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Անուշ Պետրոսյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Անուշ Պետրոսյանը 27.05.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության զորքերի և Ա/Ձ Անուշ Պետրոսյանի միջև 25.12.2019թ. կնքվել է «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-20/9/Բ/5/ԿԾ-20» ծածկագրով տպիչ սարքերի լիցքավորման և վերանորոգման ծառայությունների մատուցման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Ա/Ձ Անուշ Պետրոսյանը ստանձնում է տպիչ սարքերի լիցքավորման և վերանորագման ծառայությունների մատուցման պարտավորությունը (հետայսու նաև՝ ծառայություն) համաձայն սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցի պահանջների:

ՀՀ ոստիկանության զորքերը ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված համապատասխան գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության զորքերի և Ա/Ձ Անուշ Պետրոսյանի միջև 25.12.2019թ. կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-20/9/Բ/5/ԿԾ-20» ծածկագրով տպիչ սարքերի լիցքավորման և վերանորոգման ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում Ա/Ձ Անուշ Պետրոսյանը ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ հրաժարվել է ապահովել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պայմաններով ծառայության մատուցումը»:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա, որոնք էական նշանակություն ունեն Ա/Ձ Անուշ Պետրոսյանին գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը որոշելիս.

1.Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ ոստիկանության զորքերի կողմից ՀՀ ոստիկանության զորքերի և Ա/Ձ Անուշ Պետրոսյանի միջև 25.12.2019թ. կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԾՁԲ-20/9/Բ/5/ԿԾ-20» ծածկագրով տպիչ սարքերի լիցքավորման և վերանորոգման ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծվել է՝ հիմքում դնելով այն հանագամանքը, թե իբր Ա/Ձ Անուշ Պետրոսյանը ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ հրաժարվել է ապահովել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պայմաններով ծառայության մատուցումը:

Մինչդեռ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այս պարագայում գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք քննարկել ստորև ներկայացվող փաստական հանգամանքի իրավաչափության հարցը՝ կարծես թե ՀՀ ոստիկանության զորքերի կողմից պայմանագրի լուծման համար հիմք է հանդիսացել այն հանգանքը, որ Ա/Ձ Անուշ Պետրոսյանը 24.03.2020թ. սպասարկվող տպիչներից մեկի հետ կապված տվել է եզրակացություն, որով հայտնել է հետևյալ կարծիքը. Ա/Ձ Անուշ Պետրոսյանի մասնագետների դիագնոստիկ ստուգման արդյունքում պարզ է դարձել, որ տպիչ Xerox WorkCentre 3045B վերանորոգման ենթակա չէ: Այս պահի դրությամբ աշխատում է, սակայն տպագրությունը նորմալից բաց է, այդ խնդիրն էլ առաջացել է տպիչի երկար շահագործելուց հետո: Խնդիրը հնարավոր չէ շտկել, ավելի նպատակահարմար է տվյալ տպիչը հանել շահագործումից»:

Վերը նշված գրությունից հետո ՀՀ ոստիկանության զորքերի կողմից 03.04.2020թ. որոշում է կայացվել Xerox WorkCentre 3045B տպիչի վերաբերյալ մասնագիտական

եզրակացություն ստանալ Ա/Ձ Մանվել Ջալավյանից, վերջինս ս.թ. ապրիլի 9-ի ներկայացրել է ԱԿՏ վերտառմամբ գրություն, որտեղ հայտնել է, որ Xerox WorkCentre 3045B տպիչի դիագնոստիկայի արյունքում պարզվել է, որ վնասված է սարքի թմբուկը և կա անհրաժեշտություն ավելացնելու տոներ /developer/, որը պարտադիր է մուգ տպագրության համար: Սարքավորման վերանորոգման գումարը կկազմի 16.000 դրամ:

Այս պարագայում հարկ ենք համարում հայտնել, որ Ա/Ձ Մանվել Ջալավյանը չի հանդիսանում փորձագիտական եզրակացություն տրամադրող լիցենզավորված կազմակերպություն, ավելին, վերջինս հանդիսանում է տվյալ ընթացակարգի շրջանակներում հաջորդող տեղ զբաղեցնող մասնակիցը և մենք կարծում ենք, որ Ա/Ձ Մանվել Ջալավյանն ուներ շահագրգռվածություն տալու այնպիսի եզրակացություն, որով կթերագնահատվեին մրցակից Ա/Ձ Անուշ Պետրոսյանի ծառայությունները, հետևաբար սույն ընթացակարգի շրջանակներում Մանվել Ջալավյանի կողմից ս.թ. ապրիլի 9-ին տրված եզրակացությունը չի կարող քննարկվել բողոքներ քննող անձի կողմից, քանի որ նորից ենք հայտնում, վերջինս չի հանդիսանում փորձագիտական եզրակացություն տրամադրող լիցենզավորված կազմակերպություն և ուղղակիորեն շահագրգռված էր, որպեսզի պատվիրատուն լուծարեր պայմանագիրը Մանվել Ջալավյանի Ա/Ձ-ի հետ:

2. Պայմանագրի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ

սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը, իսկ ՀՀ ոստիկանության զորքերի կողմից պայմանագրի միակողմանի լուծման գրությամբ արձանագրվել է, որ Ա/Ձ Անուշ Պետրոսյանը ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ հրաժարվել է ապահովել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պայմաններով ծառայության մատուցումից:

Մինչդեռ Ա/Ձ Անուշ Պետրոսյանը երբեք չի հրաժարվել «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-20/9/Բ/5/ԿԾ-20» ծածկագրով պայմանագրի իրեն վերապահված պարտականություններից՝ ծառայությունները իրականացրել է պատշաճ, որի դիմաց ՀՀ ոստիկանության զորքերը կատարել է համապատասխան վճարումներ, իսկ թե երբ և ինչպես է Ա/Ձ Անուշ Պետրոսյանը հրաժարվել է Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումից, ապա այս դեպքում գտնում ենք, որ ապացուցման բեռը պետք է դրվի ՀՀ ոստիկանության զորքերի վրա, քանի որ այդպիսի տեղեկատվություն կամ գրություն ուղղակի առկա չէ:

Որպես ծառայությունների մատուցումից հրաժարվել չի կարող մեկնաբանվել նաև Ա/Ձ Անուշ Պետրոսյանի 24.03.2020թ. պատվիրատուին ուղղված գրությունը, քանի որ ԱՁ-ն ընդամենը հայտնել է կարծիք, որ Xerox WorkCentre 3045B այդ պահի դրությամբ աշխատում է, սակայն տպագրությունը նորմալից բաց է, այդ խնդիրնել առաջացել է տպիչի երկար շահագործելուց հետո, և նպատակահարմար է տվյալ տպիչը հանել շահագործումից:

Փաստացիորեն, Պայմանագիրը նախատեսում է պայմանագիրը լուծելու երկու հիմք՝ մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին և խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Այստեղ պետք է նկատի ունենալ, թե արդյոք առկա է եղել այս հիմքերից որևիցե մեկը, որի պայմաններում ՀՀ ոստիկանության զորքերի կողմից պայմանագրի

միակողմանի լուծումը կարող է համարվել իրավաչափ: Ակնհայտ է, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չի արձանագրվել, որ Ա/Ձ Անուշ Պետրոսյանի մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին կամ խախտվել է ծառայության մատուցման ժամկետը, այլ ընդամենը վերացական, անհիմն նշվել է, որ Ա/Ձ-ն հրաժարվել է պայմանագրի կատարումից: Վերոհիշյալ փաստը, նախ, չի համապատասխանում իրականությանը, և երկրորդ, այս հիմքը չի տեղավորվում Պայմանագրի 2.1.3-րդ ենթակետով սահմանված պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքերի շրջանակներում:

Արդյունքում ՀՀ ոստիկանության զորքերի կողմից թույլ տված ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում է Ա/Ձ Անուշ Պետրոսյանը հայտնվել է «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառվելու վտանգի առջև»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Մասնակիցը խնդրել է իրեն չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ա/Ձ Անուշ Պետրոսյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/109 ընթացակարգի շրջանակներում 25.05.2020թ. ժամը 12:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.

ՀՀ ոստիկանությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 15.05.2019թ. թիվ 3/4/18450-20 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ոստիկանության զորքերի և Ա/Ձ Անուշ Պետրոսյանի միջև 25.12.2019թ. կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-20/9/Բ/5/ԿԾ-20» ծածկագրով՝ տպիչ սարքերի լիցքավորման և վերանորոգման ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում Ա/Ձ Անուշ Պետրոսյանը ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ հրաժարվել է

ապահովել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պայմաններով ծառայության մատուցումը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/109 ընթացակարգի շրջանակներում 25.05.2020թ. ժամը 12:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցիչների մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/109 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/109 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության զորքերի և Ա/Ձ Անուշ Պետրոսյանի միջև 2019 թվականի դեկտեմբերի 25-ին կնքվել է «ՀՀ ոստիկանության զորքերի կարիքների համար տպիչ սարքերի լիցքավորման և վերանորոգման ծառայությունների մատուցման» N «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-20/9/Բ/5/ԿԾ-20» պետական գնման պայմանագիր, որով Կատարողը ստանձնել է տպիչ սարքերի լիցքավորման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. Պատվիրատուի կողմից 15.05.2020թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-20/9/Բ/5/ԿԾ-20» ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության՝ 19.05.2020թ. թիվ 26/26-1/7363-2020 գրությունը, ՀՀ ոստիկանության՝ 15.05.2020թ. թիվ 3/4/18450-20 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես՝ ՀՀ ոստիկանության զորքերի և Ա/Ձ Անուշ Պետրոսյանի միջև 2019 թվականի դեկտեմբերի 25-ին կնքվել է «ՀՀ ոստիկանության զորքերի կարիքների համար տպիչ սարքերի լիցքավորման և վերանորոգման ծառայությունների մատուցման» N «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-20/9/Բ/5/ԿԾ-20» պետական գնման պայմանագիր, որով Կատարողը ստանձնել է տպիչ սարքերի լիցքավորման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Ա/Ձ Անուշ Պետրոսյանը ՀՀ ոստիկանության զորքերին ուղղված 24.03.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Մասնագետների դիագնոստիկ ստուգման արդյունքում պարզ է դարձել, որ տպիչ «Xerox WorkCentre 3045B» վերանորոգման ենթակա չէ:

Այս պահի դրությամբ աշխատում է, սակայն տպագրությունը նորմալից բաց է, այդ խնդիրն էլ առաջացել է տպիչի երկար շահագործելուց հետո:

Խնդիրը հնարավոր չէ շտկել, ավելի նպատակահարմար է տվյալ տպիչը հանել շահագործումից»:

Այնուհետև՝ ՀՀ ոստիկանության զորքերը Ա/Ձ Մանվել Ջալավյանին ուղղված 03.04.2020թ. գրությամբ խնդրել է Ա/Ձ Մանվել Ջալավյանին տալ մասնագիտական եզրակացություն նշված սարքի անսարքության վերաբերյալ և նշել վերանորոգման հնարավոր տարբերակները:

Ա/Ձ Մանվել Ջալավյանի կողմից 09.04.2020թ. կազմվել է համապատասխան ակտ, համաձայն որի, վերջինս հայտնել է, որ «Xerox WorkCentre 3045 S/N 3192314800» բազմաֆունկցիոնալ սարքի դիագնոստիկայի արդյունքում պարզվել է, որ վնասված է սարքի թմբուկը, և կա անհրաժեշտություն ավելացնելու տոներ (developer), որը պարտադիր է մուգ տպագրության համար: Միևնույն ժամնանակ նշելով այն մասին, որ սարքավորման վերանորոգման գումարը կկազմի 16.000 դրամ:

20.04.2020թ. ՀՀ ոստիկանության զորքերի կողմից կազմվել է զեկուցագիր այն մասին, որ 2020թ ընթացքում ոստիկանության զորքերի տպիչ սարքերի վերանորոգման

և քարթրիջների լիցքավորման աշխատանքներն իրականացնող Ա/Ձ Անուշ Պետրոսյանի կողմից վերանորոգման և լիցքավորման աշխատանքները հաճախակի կատարվում են թերություններով՝ խախտելով «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԾՁԲ-20/9/Բ/5/ԿԾ-20» պայմանագրի Հավելված 1-ի պարտադիր պայմանների 3-րդ և 5-րդ կետերի պահանջները, ինչը խոչընդոտում է զորամասերի առօրյա ծառայողամարտական խնդիրների կատարմանը: Նշված խնդիրները վերացնելու համար 06.03.2020թ. Ա/Ձ Անուշ Պետրոսյանին ուղարկվել է ծանուցում, որին ի պատասխան հայտնվել է, որ վերանորոգման ենթակա տպիչներից մեկը հնարավոր չէ վերանորոգել և այն պիտանի չէ հետագա շահագործման համար: Դրանից հետո դիմել են նմանատիպ գործունեությամբ զբաղվող Ա/Ձ Մանվել Ջալավյանին՝ նշված սարքի անսարքության վերաբերյալ մասնագիտական եզրակացություն ստանալու և վերանորոգման հնարավոր տարբերակներն իմանալու համար, որին ի պատասխան՝ Ա/Ձ Մանվել Ջալավյանը հայտնել է, որ նշված տպիչ սարքը ենթակա է վերանորոգման և վերանորոգումը կարժենա 16.000 դրամ:

Այնուհետև՝ ՀՀ ոստիկանության զորքերը, Ա/Ձ Անուշ Պետրոսյանին ծանուցելով Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին, հայտնել է, որ Պայմանագրի շրջանակներում Ա/Ձ Անուշ Պետրոսյանը ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ, հրաժարվել է ապահովել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ծառայության մատուցումը:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը, ընդ որում՝ պայմանագրի 2.1.3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացին կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 7.9-րդ կետը՝ ՀՀ ոստիկանության զորքերը 14.05.2020թ. միակողմանի մասնակի լուծել է թիվ «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԾՁԲ-20/9/Բ/5/ԿԾ-20» պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից 15.05.2020թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-20/9/Բ/5/ԿԾ-20» ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

«ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-20/9/Բ/5/ԿԾ» ծածկագրով ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի 05.12.2019թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Մանվել Ջալավյանը հանդիսանում է 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից:

Այսպիսով՝ ՀՀ ոստիկանության զորքերի կողմից թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-20/9/Բ/5/ԿԾ-20» պայմանագրի լուծման հիմք հանդիսացել է Ա/Ձ Մանվել Ջալավյանի կողմից տրամադրված մասնագիտական կարծիքը. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նշված մասնագիտական կարծիքը չի դիտարկում որպես հիմնավոր և օբյեկտիվ հիմք՝ Պայմանագիրը լուծելու համար, քանի որ այն տրվել է Ընթացակարգի շրջանակներում երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցի կողմից: Ուստի գտնում եմ, որ Ա/Ձ Մանվել Ջալավյանի կողմից տրամադրված մասնագիտական կարծիքը բավարար հիմք չի կարող համարվել՝ արձանագրելու համար Ա/Ձ Անուշ Պետրոսյանի կողմից իր և ՀՀ ոստիկանության զորքերի միջև 25.12.2019թ. կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-20/9/Բ/5/ԿԾ-20» պայմանագրի էական խախտման փաստը, հետևաբար նաև՝ Մասնակցի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտման փաստը: Հետևաբար գտնում եմ, որ Ա/Ձ Անուշ Պետրոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 19.05.2020թ. թիվ 26/26-1/7363-2020 գրությամբ Ա/Ձ Անուշ Պետրոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**